

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
С. ГЕХАКЕРТ

Գնդակների գյուղապետարան հեռ. 093250663, 0231 63447

Село Гехакерт тел. 093250663, 0231 63447

N 01

«09» «01»-----» 2012թ.

«Արմավիրի մարզպետ
Ա. Ղահրամանյանին»

Մեծարգո պարոն Մարզպետ


Ձեզ է ներկայացվում «Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 9 թերթ:

Համայնքի ղեկավար



Ս. Առաքելյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<01>> ղեկտեմբերի 2011թ.

N12

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի սեփականություն համարվող գույքի գույքագրման համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի
2. Հանձնաժողովին՝ ստուգման արդյունքում կազմել համապատասխան ակտ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Առաքելյան

2011թ. ղեկտեմբերի 01
գ. Գեղակերտ



Հարգելի է հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ռեզակերտի պողոտայի համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 01-ի N 12 կարգադրությամբ

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

- | | | |
|--------------------------|--|----------------------|
| 1. Հարությունյան Նատալյա | Աշխատակազմի քարտուղար | Հանձնաժողովի նախագահ |
| 2. Ամիրխանյան Զավահիր | <<Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն | Հանձնաժողովի անդամ |
| 3. Համբարձումյան Նաիրա | Գլխավոր մասնագետ | Հանձնաժողովի անդամ |
| 4. Գալստյան Սուսաննա | Առաջատար մասնագետ | Հանձնաժողովի անդամ |
| 5. Մուղումյան Գառնիկ | Ավագանու անդամ | Հանձնաժողովի անդամ |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<01>> ղեկտեմբերի 2011թ.

N13

ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի տարածքում ընտանի կենդանիների համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Առաքելյան

2011թ. ղեկտեմբերի 01
գ. Գեղակերտ

Հավելված հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արժավորման և Գնահատման
Գործակալության համալսարանի
2017թվականի դեկտեմբերի 01-ի
N13 կարգադրությամբ



ԿԵՆՏՐԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԿՁՄՈՂ

- | | | |
|---------------------|---------------------|----------------------|
| 1. Զաքարյան Դավիթ | Առաջատար մասնագետ | Հանձնաժողովի նախագահ |
| 2. Մովսեսյան Կարինե | 2-րդ կարգի մասնագետ | Հանձնաժողովի անդամ |
| 3. Գալստյան Անժելա | 2-րդ կարգի մասնագետ | Հանձնաժողովի անդամ |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«20» դեկտեմբերի 2011թ.

N 14

ՆԱՏԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ԶԱՎԱՀԻՐ ԱՄԻՐՆԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պետի տեղակալի 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 06/033-1311 գրությունը

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Նատալյա Հարությունյանին և «Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային հիմնարկի տնօրեն Զավահիր Ամիրխանյանին 2011 թվականի դեկտեմբերի 27-ից 28-ը գործուղել քաղաք Երևան՝ մասնակցելու «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից անցկացվող գնումները համակարգողների ուսուցման և վերապատրաստման դասընթացներին:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Առաքելյան

2011թվականի դեկտեմբերի 20
գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<01>>դեկտեմբերի 2011թ.

N60

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Նատալյա Հարությունյանի դիմումը

Որոշում եմ

1. 004-013 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորին տրամադրել հասցե՝ Վիկտոր Համբարձումյան փողոց, 19:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Առաքելյան

2011թվական դեկտեմբերի 01
Գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<01>> դեկտեմբերի 2011թ.

N61

ՋԲԱԴԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՄՀԵՐ, ՆԱՐԻՆԵ, ԳԵՎՈՐԳ, ԳՈՌ ԽԱԼԱԹՅԱՆՆԵՐԻ
ԵՎ ՕՖԻԿ ԲԱՂԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղի բնակիչներ Միեր, Նարինե, Գևորգ, Գոռ Խալաթյանները և Օֆիկ Բաղայանը դիմել են Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղի Պերճ Պռոշյան փողոց 20 հասցեում գտնվող բնակավայրի, տնամերձ 1131.0 քմ հողամասի, ինքնակամ կառուցված բնակելի տան և շենք-շինությունների օրինականացման խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և նույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> ՀՀ օրենքով.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզ, գյուղ Գեղակերտ, Պերճ Պռոշյան փողոց թիվ 20 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Միեր Նարինե, Գևորգ, Գոռ Խալաթյանների և Օֆիկ Բաղայանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 1131.0քմ հողամասի և այդ հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Միեր, Նարինե, Գևորգ, Գոռ Խալաթյանների սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք - շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Առաքելյան

2011թվական դեկտեմբերի 01
գյուղ Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<20>> ղեկտեմբերի 2011թ.

N 62

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ, 219¹-րդ, 281-րդ, 282-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Մկրտիչ Միշայի Հակոբյանի վերաբերյալ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Մեծամորի բաժնի կողմից կազմված Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162 հոդվածի կանոնները խախտելու մասին 2011 թվականի նոյեմբերի 02-ի թիվ 165 արձանագրությունը և 2011 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 87-3/3-2767 գրությունը, լսելով խախտում կատարողի բացատրությունը.

Որոշում եմ՝

1. Մկրտիչ Միշայի Հակոբյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ տուգանքի ձևով 1000 / հազար / ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Մեծամորի բաժնի, մյուս օրինակն հանձնել Մկրտիչ Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Առաքելյան

2011թվականի դեկտեմբերի 20
գ. Գեղակերտ